ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

Վիկտորիա Պատվականի Ոսկանյանի «Բազմաբնակարան բնակելի շենքերի դասակարգչի ձևավորման չափանիշները Երևան քաղաքում» թեմայով ԺԸ.00.01- «Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Վերջին տասնամյակում ստեղծված գնային քառսային իրավիճակը դժվարեցնում է գնորդներին օբյեկտիվորեն գնահատել ձեռք բերվող բնակարանի արժեքը:

Այս առումով Վ. Պ. Ոսկանյանի ատենախոսությունը՝ նվիրված Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի դասակարգչի ձևավորման չափանիշների մշակմանը արդիական է:

Աշխատանքում նպատակ է դրված մշակել բազմաբնակարան բնակելի շենքերի դասակարգչի մոդել, որը հնարավորություն կտա կազմակերպել նախագծման գործընթացը, ապահովելով նախագծման և շինարարության գործընթացների համակարգումը:

Ատենախոսական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, շարադրված 148 էջի վրա, պարունակում է 21 հավելված և գրականության ցանկ՝ 127 անվանմամբ:

Առաջին գլխում հեղինակը ուսումնասիրել է բազմաբնակարան բնակելի շենքերի ծավալային-հատակագծային լուծումների ձևավորման պատմական, հետխորհրդային երկրներում բնակելի շենքերի նախագծման փորձը և միջազգային շուկաների մոտեցումները: Հետազոտությունը հնարավորություն է տալիս առանձնացնել նախագծման հիմնարար սկզբունքներն ու արդյունավետության բարձրացման կարևոր ուղղությունները:

Երկրորդ գլխում ներկայացվում է Երևանի բազմաբնակարան բնակելի շենքերի տիպաբանության ձևավորման վրա ազդող հիմնական գործոնների համապարփակ և համակարգային ուսումնասիրությունը 1991–2020 թվականների ժամանակահատվածում, որը ընդգրկում է քաղաքային կառուցվածքի, բնակելի տարածքների կազմակերպման, ինչպես նաև բնակչության սոցիալ-տնտեսական և բնակարանային պահանջների փոփոխությունների ամբողջական վերլուծություն: Մանրամասն վերլուծվել է շենքերի

զարգացման փուլերը, դրանց տարածական տեղաբաշխումը քաղաքի տարբեր հատվածներում, ինչպես նաև քաղաքաշինական, սոցիալ-դեմոգրաֆիկ, բնական-կլիմայական, ինժեներա-տնտեսական և էսթետիկ գործոնների բազմազան ազդեցությունները:

Երրորդ գլխում ներկայացվում է Երևանի բազմաբնակարան բնակելի շենքերի դասակարգչի մշակումն և դրա հիմնարար մեթոդաբանությունը: Հեղինակը վերլուծել է շենքերի ճարտարապետա-հատակագծային հատկանիշները, դասակարգման առանձնահատկությունները և առաջարկվող չափանիշների համալիր կազմը:

Ներկայացված են նաև դասակարգչի ձևավորման փուլերը, դրանց տրամաբանական հաջորդականությամբ: Շենքերը դասակարգվում են հարմարավետության երեք կարգերի՝ I, II և III հիման վրա, ինչը թույլ է տալիս գնահատել ինչպես շենքերի ճարտարապետական լուծումների որակը, այնպես էլ դրանց բնակելի միջավայրում ինտեգրացիան: Առաջարկվող դասակարգիչը համախմբում է բազմաթիվ գործոններ՝ քաղաքաշինական, սոցիալ-տնտեսական, բնապահպանական, ինժեներա-տեխնիկական և էսթետիկ, ինչը ապահովում է գիտական հիմքերով բազմաշերտ վերլուծություն և հնարավորություն է տալիս մշակել համալիր մոտեցումներ բազմաբնակարան շենքերի նախագծման և քաղաքի բնակելի միջավայրի պլանավորման արդյունավետության բարձրացումը:

Հաշվի առնելով ժամանակի զարգացումները և տեխնոլոգիական նորարարությունները, մշակվել է Երևանի բազմաբնակարան բնակելի շենքերի դասակարգչի մոդել, որը ոչ միայն կազմակերպում և կառավարում է նախագծման գործընթացը, այլն հնարավորություն է տալիս համակարգել նախագծի տարրերը, պարզել և շտկել անճշտությունները:

Աշխատանքի վերաբերյալ կան հետևյալ դիտողություններն ու ցանկությունները

1. Բազմաթիվ ոճական թերությունները և կառուցվածքային անճշտությունները շտկվել են համատեղ աշխատանքի ընթացքում:
2. Դասակարգչի չափանիշների համալրման գործընթացում օգտակար կլիներ ընդգրկել սեյսմիկ անվտանգությանը և շենքերի կառուցվածքային կայունությանը վերաբերվող չափանիշները, որոնք թույլ կտային ոչ միայն գնահատել շենքերի դիմակայողականությունը երկրաշարժերին, այլ նաև համեմատական վերլուծություն

իրականացնել շենքերի նախագծման որակի և անվտանգության մակարդակի վերաբերյալ:

3. Հետազոտությունը կարող էր ավելի լայն ընդգրկել դասակարգման այլ մեթոդների կիրառությունը տարբեր երկրների փորձի հիման վրա, ինչի շնորհիվ հնարավոր կլիներ ոչ միայն համեմատական վերլուծություն կատարել միջազգային և տեղական մոտեցումների միջև, այլ նաև գնահատել առաջարկվող դասակարգչի մոդելի կիրառելիությունը: Արդյունքում հնարավոր կլիներ ձևավորել ավելի միասնական և համապարփակ մեթոդաբանություն, որը կծառայի ոչ միայն գնահատման, այլև կանխատեսման նպատակների համար:

Նշված դիտողությունները չեն նվազեցնում ատենախոսության արժեքը: Հեղինակի աշխատանքը կատարված է ինքնուրույն, ամբողջական և ունի տեսական ու կիրառական նշանակություն: Ուսումնասիրված հարցերը վերաբերում են նախագծման, կառուցման և շահագործման գործընթացներին: Ատենախոսության հիմնական դրույթները հրատարակված են 14 տպագիր աշխատանքներում, որոնցից 1-ը՝ Scopus գիտատեղեկատվական շտեմարանում: Սեղմագիրը և տպագրված աշխատանքները արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Հաշվի առնելով վերոնշյալը, գտնում եմ, որ ներկայացված «Բազմաբնակարան բնակելի շենքերի դասակարգչի ձևավորման չափանիշները Երևան քաղաքում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակը՝ Վիկտորիա Պատվականի Ոսկանյանը արժանի է ԺԸ.00.01- «Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՃՇՀԱՀ Քաղաքաշինության ամբիոնի պրոֆեսոր, ճ.դ.,
ՀՀ վաստակավոր ճարտարապետ Ա.Ա.Առուստամյան

Ա.Ա.Առուստամյանի ստորագրությունը
հաստատում եմ, ՃՇՀԱՀ գիտական քարտուղար Լ.Հ.Լևոնյան

7.11.2025թ.